ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/110

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ 26/26-1/11055-2019 գրությամբ «Մեդիտեք» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 26.06.2019թ. թիվ V02.4/[14253]-19 գրության հիման վրա, 02.07.2019թ. «Մեդիտեք» ՍՊԸ-ին և ««ՈւԱՄ» ՆՊՊ» ՍՊԸ-ին

/համատեղ գործունեության պայմանագիր/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամը 26.06.2019թ. թիվ V02.4/[14253]-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Սույն թվականի մայիսի 22-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2019/16-22-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման միջոցով բժշկական սարքավորումների և գործիքների գնման ընթացակարգ: Գնանշման հարցման մասնակիցների թվում հայտ է ներկայացրել նաև «Մեդիտեք» ՍՊ ընկերությունը, որը գնահատող հանձնաժողովի 2019 թվականի հունիսի 5-ի թիվ 3 որոշմամբ ճանաչվել է N 1, 2, 3, 17 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով՝ «ԳՀԱՊՁԲ-2019/16-22-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի քարտուղարը 2019 թվականի հունիսի 6-ին ծանուցել է «Մեդիտեք» ՍՊ ընկերությանը՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի հունիսի 19-ի թիվ 4 որոշմամբ արձանագրվել է, որ «Մեդիտեք» ՍՊ ընկերության կողմից ներկայացված N 1, 2, 3, 17 չափաբաժինների մասով առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի դրույթներով՝ ընթացակարգի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով ծանուցել է «Մեդիտեք» ՍՊ ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում

շտկել հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի հունիսի 24-ի թիվ 5 որոշմամբ արձանագրվել է, որ «Մեդիտեք» ՍՊ ընկերությունը 3-րդ և 17-րդ չափաբաժինների մասով շտկել է իր կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, իսկ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով՝ ոչ:»:

«Մեդիտեք» ՍՊ ընկերության տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, տրամադրվել են «ԳՀԱՊՁԲ-2019/16-22-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից «Մեդիտեք» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած գնանշման հարցմանը մասնակցելու հայտը և որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ընթացակարգի արձանագրությունների պատճենները:

3. <u>«Մեդիտեք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.07.2019թ.-ին գրությամբ դիմել է Մասնակցին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ 26/26-1/11055-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը:

«Մեդիտեք» ՍՊԸ-ն ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ներկայացվել է իր կարիքների համար բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-2019/16-22-ԵՊԲ2» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը: Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի հունիսի 28-ի թիվ 6 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, համաձայն որի Ընկերության կողմից ներկայացված հայտով առաջարկված «Պերֆուզիոն

պոմպ» և «Կապնոգրաֆիայի մոնիտոր» սարքավորումների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում մրցույթի հրավերում նշված պահանջներին:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Գնման առարկայի բնութագրերը...

... պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը; ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալներ ամբողջական և համարժեք նկարագրությունը:

... Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:»:

Ընկերության կողմից ճիշտ է ընկալվել պայմանագրի առարկան և այն կարիքը, որի բավարարմանն է ուղղված սույն գնումը: Ընկերությունը գտնում է, որ իր կողմից ներկայացված հայտում նշված ապրանքները համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է գնումը: Ավելին Պատվիրատուի կողմից ներկայացված ապրանքի բնութագրերը օբյեկտիվորեն հիմնավորված չեն հետևյալ հիմանվորումներով

1. Բնութագրերի համեմատության վերաբերյալ

1,1. Կապնոգրաֆիայի սարքի բողոքարկվող բնութագրերը

Պահանջ Պոմպի հոսքի արագությունը ոչ պակաս 75մլ/րոպե Պահանջը սխալ է ձևակերպված ճիշտ կլիներ Պոմպի հոսքի արագությունը ոչ ավել 75մլ/րոպե

Օքսիմետրիայի կողմնային հոսքի / Side stream/ տարբերակի ընտրության պարագայում հոսքի արագության մեծությունը /վերլուծության համար անհրաժեշտ արտաշնչած օդից կերցրած մասը/ ունի մի շարք բացասական հետևանքներ, ինչի պատճառով ամբողջ աշխարհում աշխատանքներ են տարվում հոսքի արագության նվազեցման ուղղությամբ: Բացասական հետևանքներից մեկը չափման ենթակա շնչառության տիրույթի սահմանափակումն է վերին սահմանում: Պատահական չէ, որ գնորդը այդ բնութագիրը սահմանել է ոչ պակաս 3-80 շնչ/րոպե որը բավարար չի

համարվում երեխաների և նորածինների մոնիտորինգի համար: Մրցույթում նշված սահմանները բնորոշ են գնորդի կողմից հիմք ընդունած սարքին:

Մեր հայտում առաջարկված է Պոմպի հոսքի արագությունը 50 մլ/րոպե և չափման ենթակա շնչառության տիրույթը 2-150 շնչ/րոպե և բավարար է բոլոր տարիքի հետազոտվողների համար: Այս բնութագրերը ներկայումս լավագույնն են համարվում:

Այս բնութագրով գնորդի բողոքը հիմնավորված համարել չի կարելի:

- Պահանջ Սրտի զարերակի հաճախականության տիրույթը ոչ պակաս բան 18-255 զ/ր Անհրաժեշտ է նշել, որ խոսքը գնում է օքսիմետրիայի եղանակով զարկերակի հաճախության /պուլսի/ չափման մասին: Ի տարբերություն այլ եղանակներից, օքսիմետրիայի եղանակով չափվող պարամետրերի / սատուրացիա և պուլս/ տիրույթների և ճշտության բնութագրերը ստուգվում և ստուգաչափվում են միմիայն կենդանի մարդկանց վրա: Թեստավորման գործընթացներում ներգրաված կամավոր մասնակիցների կյանքի անվտանգությունը ապահովելու համար հետազոտման տիրույթները խիստ սահմանափակվում են սատուրացիա տիրույթը 70%-100% և պուլս 30-250 զ/ր.: Սա է պատճառը, որ այս տիրույթներից դուրս չափումների ճշտությունը և ճշմարտությունը բարեխիղճ արտադրողները չեն սահմանում, քանի ստուգել հնարավոր չէ:

Ինչ վերաբերում է պուլսի հաճախության չափման տիրույթին, ապա ամբողջ աշխարհում ընդունված է այդ տիրույթը զանազանել հետևյալ կերպ

ա. Բնականոն /նորմաներին համապատասխանող - 60-90 զ/ր բ. Թեթև /սկզբնական/ բրադիկարդիա 50-60 զ/ր գ. Չափավոր բրադիկարդիա 40-50 զ/ր.

դ. Արտահայտված /ծանր/ բրադիկարդիա 30-40զ/ր. /ավելի փոքր ներքևի սահման ընդունված չէ նշել, երբեմն նշվում է 40 կամ ցածյ սահմանումը/:

Գնորդի պահանջը չափման տիրույթի ներքևի սահմանը 18 զ/ր էական չենք համարել, քանի որ 40զ/ր և ավելի ցածր ցանկացած թվի դեպքում, գործող մեթոդաբանությանը համաձայն, հիվանդի կյանքը լուրջ վտանգի տակ է, նա անհապաղ պետք է տեղափոխվի ինտենսիվ թերապիայի կամ վերակենդանացման բաժանմունք, որտեղ նրա մոնիտորինգը պետք է իրականցվի շատ ավելի լուրջ սարքերով և առնվազն կատարվի ԷՍԳ հետազոտություն վիճակի պատճառը պարզելու և բուժում նշանակելու նպատակով: 40զ/ր և ավելի ցածր զարկերակի հաճախության պարագայում բժշկի գործողությունները կախված չեն այլևս այդ թվի մեծության հետ և մեթոդաբանորեն չեն զանազանվում:

30-250 գ/ր փիրույթը բնավ չի նշանակում, որ սարքը չի գրանցի ավելի փոքր կամ ավելի մեծ արժեքներ: Դա նշանակում է, որ փագնապալի ազգանշանավորում հնարավոր է սահմանել այդ փիրույթում և արտադրողը երաշխավորում է այդ փիրույթում չափումների հայտարարված ճշտությունը սարքի գրանցելու բոլոր արժեքները 0-300 փիրույթում:

Եզրակացություն՝ մեր տրամաբանությամբ մեր կողմից առաջարկված սարքը օքսիմետրիայի մասով ունի կարևոր և լուրջ առավելություններ, իսկ զարկերակի հաճախության մասով լիովին ապահովում է բժշկին անհրաժեշտ և բավարար չափման փիրույթ:

1.2. Պերֆուզիոն պոմպի բողոքարկվող բնութագրերի վերաբերյալ

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ մեր կարծիքով պերֆուզիոն պոմպի բնութագրերը ձևավորվել են հիմք ընդունելով B/Braun ֆիրմայի Перфузор Спэйс մակնիշի ներարկչային ավտոմատ ներարկիչը, սակայն ինչ-ինչ պատճառներով մտցրել ապակոմնորոշող աղավաղումներ:

Պահանջ Օկլյուզիոն ճնշման առնվազն 9 մակարդակ - համաձայն միջազգային ստանդարտների օկլյուզիոն ճնշման համար սահմանվում է 40-120 կՊա փիրույթ, որում մակարդակները բազմաթիվ են: B/Braun ֆիրմայի Перфузор Спэйс մակնիշի ներարկչային ավտոմատ ներարկիչը /հնարավոր է որ միակն է/ ունի 9 ընտրովի մակարդակ տագնապային ազդանշանավորման համար /уровень окклюзионного давления, активирующий сигнал тревоги/ ռուսերեն տեքստերը մեջբերումներ են B/Braun ֆիրմայի Перфузор Спэйс սարքի շահագործման ձեռնարկից/: Ինչ նպատակով է դա արվել: B/Braun ֆիրմայի հիմնավորմամբ որպեսզի կրճատվի տագնապի ազդանշանի տրման ժամանակը օկլյուզիայի ժամանակ և ոչ թե նվազեն օկլյուզիաների դեպքերը /для того, чтобы сократить время подачи сигнала тревоги при окклюзии/: Միթե 9 ընտրովի մակարդակները հնարավորություն են տալիս ավելի արագ հայտնաբերել ներարկման ճնշման անթույլատրելի մակարդակի պատճառը և վերացնել այն ավելի արագ: Ամենևին էլ ոչ անկախ նրանից, թե որ մակարդակն է ընտրված օկլյուզիոն ճնշման թուլատրելի մակարդակի գերազանցման, հնարավոր պատճառները նույն են / Уровень давления в системе достиг окклюзионного. Установленный уровень давления превышен. Насос автоматически снижает скорость введения. Проверьте отсутствие петель и перегибов инфузионной линии, проходимость инфузионного фильтра и в/в катетера. Увеличьте уровень окклюзионного давления если необходимо. Из-за различия в допусках

шприцев разных производителей, тревога по давлению может быть обусловлена высокой силой трения между поршнем и цилиндром/. Նույն այս խորհուրդներն են տրվում ինֆուզիոն ներարկիչներ արտադրող բոլոր ֆիրմաների կողմից, որոնք համարում են, որ տագնապի ազդանշանի միացման համար բավարար է ընդամենը ճնշումների 3 տիրույթ, ինչն իրականում պակասեցնում է ազդանշանի միացման անհրաժեշտությունը տագնապի ազդանշանավորման բարձր, միջին և ցածր զգայնության մակարդակներ, որոնք պետք է կոմպենսացնեն անոդների, ներարկվող նյութի կամ օգտագործվող պարագաների յուրահատկությունները և ապահովեն անհրաժեշտ անվտանգությունը:

- Պահանջ KVO կարգավորվող, 1մլ/ժ-10մլ/ժ: Ակնհայտ վրիպում է: Միջազգային ստանդարտները անվտանգությունը ապահովելու նպատակով խորհուրդ են տափս KVO-ի արագությունը սահմանել 0.1մլ/ժ-3մլ/Ժ տիրույթում: B/Braun ֆիրմայի Перфузор Спэйс սարքի համար սահմանված է հետևյալը < 10 մլ/ժ ներարկման արագության պարագայում KVO 3 մլ/ժ; <10 մլ/ժ ներարկման արագության պարագայում KVO 1 մլ/ժ; <1 մլ/ժ ներարկման արագության պարագայում KVO մնում է հավասար ներարկման արագությանը /Скорость инфузии в режиме KVO Скорость а 10 мл/ч: KVO 3 мл/ч; Скорость < 10 мл/ч: KVO 1 мл/ч; Скорость < 1 мл/ч: KVO = заданной скорости/ Նշենք որ ներարկման հնարավոր նվազագուն արագությունը չի կարող լինել ավելի քան 0.1մլ/ժ:

Մեզ հայտնի չէն ինֆուզիոն ավտոմատ ներարկիչներ, որոնց համար սահմանված է KVO 1մլ/ժ-10մլ/ժ, սակայն մեր կողմից առաջարկվող սարքի արտադրող ֆիրման պատրաստականություն է հայտնել մատակարարել հենց այդպիսինը, եթե գնորդը հաստատում է իր ցանկությունը և, բնականաբար, իր վրա է վերցնում այդ ռեժիմով շահագործելու անվտանգության պատասխանատվությունը: Դա ընդամենը սարքի վերածրագրավորման հարց է և հավելավճար չի պահանջվում:

Գնորդի պահանջը մենք պատրաստ ենք բավարարել, սակայն պահանջը ճիշտ և օբյեկտիվորեն հիմնավորված չենք համարում:

Ցանկալի է, որ գնորդը ներկայացնի գոնե երկու սերիական արտադրության սարք, որոնք բավարարում են իրեն կողմից ներկայացված պահանջները:

Եզրակացություն՝ վերը նշված հիմնավորումներով Օկյուզիոն ճնշման հարցում տարբերությունը էական չենք համարում,

Օկյուզիոն արագությունների վերաբերյալ պատրաստ ենք տրամադրել գնորդի կողմից ընդունելի ցանկացած տիրույթ:

Ինչ վերաբերում է իրավական հիմնավորումներին, գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնությունը, ապա վերջինս ևս չի բխում օրենքից: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքը հստակ սահմանել է այն դեպքերը, երբ անձը կարող է ընդգրկվել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ինչպես տեսնում ենք, տվյալ դեպքում առկա չէ օրենքով սահմանված որևէ հիմք անձին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու կամ նման գործընթաց նախաձեռնելու համար:

Ավելին, օրենսդիրը հստակ կարգավորում է հայտերի գնահատման գործընթացը, մասնավորապես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածը սահմանում է, որ ... Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Պաավիրատուի կողմից կատարվել են Օրենքի հայտերի գնահատման համար սահմանված պահանջները, և հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակիցներին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով վերը նշված իրավանորմերը, գտնում ենք, որ հայտում մասնակցի կողմից նշված տվյալների անհամապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին հիմք չէ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:»:

4. <u>ՍՑ-LO-2019/110 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերման նպատակով հայտարարավել է «ԳՀԱՊՁԲ-2019/16-22-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մեդիտեք» ՍՊԸ-ն:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-2019/16-22-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ԳՀԱՊՁԲ-2019/16-22-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չաւիաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հավելվածով «Մեդիտեք» ՍՊԸ-ն պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ԳՀԱՊՁԲ-2019/16-22-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 05.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 17-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Մեդիտեք» ՍՊԸ-ն:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով՝ «ԳՀԱՊՁԲ-2019/16-22-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի քարտուղարը 06.06.2019թ.-ին ծանուցել է «Մեդիտեք» ՍՊ ընկերությանը՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի 19.06.2019թ. կայացած նիստի թիվ 4 որոշմամբ արձանագրվել է, որ «Մեդիտեք» ՍՊ ընկերության կողմից ներկայացված N 1, 2, 3, 17 չափաբաժինների մասով առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի դրույթներով՝ ընթացակարգի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով ծանուցել է «Մեդիտեք»

ՍՊ ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

19.06.2019թ.-ին Մասնակցին ուղղված ծանուցմամբ Հանձնաժողովը մասնավորապես հայտնել է, որ *«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան-հիմնադրամի կողմից հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2019/16-22-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հունիսի 19-ի թիվ 4 որոշմամբ Ձեր կազմակերպության կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.*

Չափաբաժին N1 /Պերֆուզիոն պոմպ/

1-ին չափաբաժնով առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրի համապատասխանությունը գնահատելու համար օգտագործվել է մասնակցի ներկայացրած տեխնիկական բնութագիրը: Մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի մեջ առկա են մի քանի անհամապատասխանություններ: Որոշ բնութագրիչներ կարիք ունեն շտկման: Կից աղյուսակում ներկայացնում ենք բոլոր անհամապատասխանությունները:

	Պահանջվող տեխնիկական	*Մասնակցի կողմից ներկայացված*	*Մեկնաբանություն*
	Օկյուզիոն ճնշման	*Օկյուզիոն ճնշման 3*	*Անհամապատասխանություն,*
	KVO կարգավորվող,	*KVO կարգավորվող. 0.1 ml/h*	*Անհամապատասխանություն,*

Չափաբաժին N2 / Կապնոգրաֆիայի մոնիտոր /

2-րդ չափաբաժնով առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրի համապատասխանությունը գնահատելու համար օգտագործվել է մասնակցի ներկայացրած տեխնիկական բնութագիրը: Մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի մեջ առկա են մի շարք անհամապատասխանություններ: Որոշ բնութագրիչներ կարիք ունեն շտկման: Կից աղյուսակում ներկայացնում ենք բոլոր անհամապատասխանությունները:

	Պահանջվող տեխնիկական բնութագրիչ	*Մասնակցի կողմից ներկայացված*	*Մեկնաբանություն*
	Պոմպի հոսքի արագությունը ոչ պակաս, քան 75մլ/րոպե	*Պոմպի հոսքի արագությունը 50մլ/րոպե*	*Անհամապատասխանություն, խնդրում ենք շտկել*

	Սրտի զարկերի 1 հաճախականության տիրույթը ոչ պակաս, քան՝ 18-255զ/ր	*Սրտի զարկերի հաճախականության տիրույթը 30-300զ/ր*	*Անհամապատասխանություն, խնդրում ենք շտկել*

Չափաբաժին N3 /էլեկտրասրտագրության սարք (ԷՍԳ)/

3-րդ չափաբաժնով առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրի համապատասխանությունը գնահատելու համար օգտագործվել է մասնակցի ներկայացրած տեխնիկական բնութագիրը: Մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի մեջ առկա են մի շարք անհամապատասխանություններ: Որոշ բնութագրիչներ կարիք ունեն շտկման: Կից աղյուսակում ներկայացնում ենք բոլոր անհամապատասխանությունները:

	Պահանջվող	Մասնակցի կողմից	Մեկնաբանություն
	Արտածման ԿԱԲՐԵՐԱ ստանդարտի պարտագիր համապտասխանություն	Արտածման ԿԱԲՐԵՐԱ ; ստանդարտի պարտադիր համապտասխանություն - այս բնութագրիչը բացակայում է	Անհամապատասխանություն, խնդրում ենք շտկել
	RS -232 առկայություն	i RS -232 առկայություն-այս բնութագրիչը բացակայում է	Անհամապատասխանություն, խնդրում ենք շտկեյ
	Թրոմբոլիզիսի ցուցանիշները որոշելու ծրագիր	Թրոմբոլիզիսի ցուցանիշները որոշելու ծրագիր-այս բնութագրիչը բացակայում է	Անհամապատասխանություն, խնդրում ենք շտկել

17-րդ չափաբաժնում Օդի վերաշրջանառիչ/օդային ախտահանիչ

17-րդ չափաբաժնում բացակայում է «Պարտագիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը» նախադասությունը:

Հանձնաժողովի 24.06.2019թ. կայացած նիստի թիվ 5 որոշմամբ արձանագրվել է, որ «Մեդիտեք» ՍՊ ընկերությունը 3-րդ և 17-րդ չափաբաժինների մասով շտկել է իր կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, իսկ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով՝ ոչ:

Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ. որոշման 48-րդ կետի պահանջներով, որոշել է մերժել «Մեդիտեք» ՍՊԸ-ի հայտը՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության 02.07.2019թ. թիվ 26/26-1/11055-2019 գրությամբ «Մեդիտեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Հրավերով նախատեսված է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ

արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պարտավոր է ապրանքների գնման դեպքում ներկայացնել՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը ներկայացվել են ոչ ամբողջական կամ դրանց գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, ապա հանձնաժողովի քարտուղարը կրկին անգամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ՝

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2019/16-22-ԵՊԲՀ» ծածկագրով գնման

ընթացակարգի արդյունքում 1-ին, 2-րդ, 3-րդ, 17-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել Մեդիտեք» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 19.06.2019թ. կայացած նիստի թիվ 4 որոշմամբ արձանագրվել է, որ «Մեդիտեք» ՍՊ ընկերության կողմից ներկայացված N 1-ին, 2-րդ, 3-րդ, 17-րդ չափաբաժինների մասով առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի դրույթներով՝ ընթացակարգի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով ծանուցել է «Մեդիտեք» ՍՊ ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 24.06.2019թ. կայացած նիստի թիվ 5 որոշմամբ արձանագրվել է, որ «Մեդիտեք» ՍՊ ընկերությունը 3-րդ և 17-րդ չափաբաժինների մասով շտկել է իր կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, իսկ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով՝ ոչ:

Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ. որոշման 48-րդ կետի պահանջներով, որոշել է մերժել «Մեդիտեք» ՍՊԸ-ի հայտը՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցն պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով հրավերով սահմանված առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեդիտեք» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով համապատասխանության շտկումներ՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչ վերաբերում է Մասնակցի՝ գնման առարկայի տեխնիկական բնութագրի կապակցությամբ իր դիրքորոշմամբ նշված առարկություններին, ապա այդ

կապակցությամբ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ այդպիսիք պետք է ներկայացվեին ոչ թե առարկությունների տեսքով, այլ բողոք ներկայացնելու միջոցով, այն էլ՝ մինչև հայտերի բացումը, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նշված իրավանորմի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ օրենսդիրը իմպերատիվ կերպով սահմանել է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները բողոքարկելու իրավունքը, վերջինիս իրացման համար նախատեսելով կոնկրետ ժամանակահատված: Հետևաբար, սահմանված ժամկետներից դուրս գնման առարկայի բնութագրերի բողոքարկումը չի կարող համարվել պատշաճ կերպով ներկայացված և դառնալ քննարկման առարկա:

Հարկ եմ համարում նշել, որ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը Մասնակցի կողմից գնման առարկայի բնութագրերի հետ կապված որևէ բողոք չի ներկայացվել, այլ նաև հայտ է ներկայացրել «ԳՀԱՊՁԲ-2019/16-22-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով, որը ապացուցում է այն, որ «Մեդիտեք» ՍՊԸ-ն ի սկզբանե առարկություններ չի ունեցել հրավերի պահանջների նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 30-րդ հոդվածի 6-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ 26/26-1/11055-2019 գրությամբ «Մեդիտեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Մեդիտեք» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**